

ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆԹԵՂ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԿ ԱՌԱՋՆՈՐՂԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH

BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՍԱՆՏԱՐ

ԿԻՐԱԿԻ 8 Մարտ 2020

153

DIMANCHE, 8 Mars 2020



ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
stgregorychurch@gmail.com | www.saintgregory.ca

**ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ
L'ENFANT PRODIGE**

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵՆԷՆ

54. 11- 55. 13

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ

ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐՈՒԱԾ 2-ՐԴ ՆԱՄԱԿԷՆ

6. 1- 7. 1

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ

15. 1- 32

Les lectures de la Bible d'aujourd'hui :

2 Corinthiens 6.1- 7.1

Luc 15.1- 32

Պատարագիչ՝ Յոզեֆ Յովիլ

ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant: Prêtre Paroissial

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան Ժամերգութիւն - ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ ժամը - 12:30-ին

Requiem à 12h30

Diacres – acolytes

Chef de chœur: M. Sarkis Barsemian

Organiste: Mme Houry Manougian

ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ

ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ 2-ՐԴ ՆԱՄԱԿԷՆ

6. 1- 7. 1

Ուստի մենք ալ գործակից ըլլալով՝ կ'աղաչենք որ Աստուծոյ շնորհքը պարապ տեղ ընդունած չըլլաք: Վասն զի «Ընդունելի ժամանակի մը մէջ լսեցի քեզի», կ'ըսէ, «եւ փրկութեան օրը օգնութիւն ըրի քեզի»: Ահա՛ հիմա է ընդունելի ժամանակը, ահա՛ հիմա է փրկութեան օրը: Ուեւէ մեկուն գայթակղութիւն չենք պատճառէր, որպէս զի մեր պաշտօնը չարատաւորուի: Բայց ամէն բանի մէջ մեր անձը կ'ընծայենք՝ Աստուծոյ սպասաւորներու պէս՝ շատ համբերութիւնով վշտերու մէջ, տառապանքներու, նեղութիւններու, Օեծերու, բանտերու, խռովութիւններու, աշխատութիւններու, հսկումներու, ծովերու մէջ, Մաքրութիւնով, զիտութիւնով, երկայնամտութիւնով, քաղցրութիւնով, Սուրբ Հոգիով, անկեղծ սիրով, ճշմարտութեան խօսքով, Աստուծոյ զօրութիւնով, արդարութեան զենքերով՝ որ աջ կողմէն ու ձախ կողմէն է: Փառքով ու անարգութիւնով, գովութիւնով ու պարսաւանքով, մոլորեցնողներու պէս՝ ու ճշմարիտներ: Անծանօթներու պէս եւ ծանօթներ, մեռնողներու պէս եւ ահա կենդանի ենք, պատժուածներու պէս ու չենք սպաննուած: Տրտմածներու պէս ու միշտ ուրախ ենք, աղքատներու պէս ու շատերը կը հարստացնենք, բան մը չունեցողներու պէս եւ ամէն բան ստացած ենք: Մեր բերանը ձեզի բացուած է, ո՞վ Կորնթացիք եւ մեր սիրտը լայնցած: Դուք մեր կողմէն չէք նեղուիր, հապա ձեր ունեցած գութին կողմէ կը նեղուիք: Ուստի անոր հատուցում ընելու համար, իբրեւ որդիներուս կը խօսիմ ձեզի, դուք ալ դէպի զիս լայն բացէք ձեր սրտերը:

Անհաւատներուն հետ օտարախառն լծակից մի՛ ըլլաք. քանզի ի՞նչ մասնակցութիւն ունի արդարութիւնը անօրէնութեան հետ եւ ի՞նչ հաղորդակցութիւն ունի լոյսը խաւարին հետ Եւ ի՞նչ միաբանութիւն ունի Քրիստոս Բելիարին հետ, կամ ի՞նչ բաժին ունի հաւատացեալը անհաւատին հետ Եւ ի՞նչ յարմարութիւն ունի

Աստուծոյ տաճարը կուռքերուն հետ. վասն զի դուք կենդանի Աստուծոյ տաճարն էք. ինչպէս Աստուած ըսաւ, թէ «Անոնց մէջ պիտի բնակիմ ու անոնց մէջ պիտի քալեմ եւ անոնց Աստուած պիտի ըլլամ ու անոնք ինծի ժողովուրդ պիտի ըլլան»: «Ասոր համար ելէ՛ք անոնց մէջէն ու գատուեցէ՛ք, կ'ըսէ Տէրը, պիղծ բանի մի՛ դպչիք». «Ու ես ձեզ պիտի ընդունիմ»: «Եւ ես ձեզի Հայր պիտի ըլլամ ու դուք ինծի տղաքներ ու աղջիկներ պիտի ըլլաք, կ'ըսէ Ամենակալ Տէրը»:

Ուստի, սիրելիներ, որովհետեւ մենք այս խոստումները ունինք, մեր անձերը մարմնի ու հոգիի ամէն կերպ պղծութենէ մաքրենք եւ սրբութիւնը կատարելագործենք Աստուծոյ վախովը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՌԻԿԱՍՈՒ 15. 1- 32

Շատ մը մաքսաւորներ ու մեղաւորներ անոր կը մօտենային իրմէ լսելու համար: Իսկ փարիսեցիներ ու դպիրներ տրտունջ կ'ընէին ու կ'ըսէին. «Սահկա մեղաւորները կ'ընդունի ու անոնց հետ կ'ուտէ»:

Յիսուս այս առակը խօսեցաւ անոնց՝ ըսելով. «Ձեզմէ ո՞վ է այն մարդը, որ եթէ հարիւր ոչխար ունենայ եւ անոնցմէ մէկը կորսնցնէ, իննսունընը չի ձգեր անապատին մէջ ու այն կորսուածին ետեւէն երթար, մինչեւ զանիկա գտնէ: Ու երբ գտնէ, ուրախանալով իր ուսերուն վրայ կը դնէ զանիկա եւ տունը գալով, կը կանչէ բարեկամներն ու դրացիները ու անոնց կ'ըսէ. Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորսուած ոչխարս գտայ: Ձեզի կ'ըսեմ թէ այսպէս աւելի ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի համար, որ կ'ապաշխարէ, քան թէ իննսունինը արդարներու համար՝ որոնց ապաշխարութիւն պէտք չէ»:

«Կամ թէ ո՞վ է այն կինը որ տասը դրամ ունենայ ու դրամ մը կորսնցնէ, ճրագ չի վառեր ու տանը մէջ աւել գարներ եւ զգուշութեամբ փնտռեր, մինչեւ գտնէ: Ու երբ գտնէ, կը կանչէ բարեկամներն ու դրացիները եւ կ'ըսէ. Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորսնցուցած դրամս գտայ: Այնպէս ալ, ձեզի կ'ըսեմ, ուրախութիւն կ'ըլլայ Աստուծոյ հրեշտակներուն առջեւ մէկ մեղաւորի համար, որ կ'ապաշխարէ»:

Ապա ըսաւ. «Մարդ մը երկու որդի ունէր. Անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ. Հա՛յր, քու ստացուածքէդ ինծի իյնալու բաժինը տուր

ինձի: Ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը: Շատ օրեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր բաները հաւաքեց, հեռու երկիր մը գնաց եւ հոն անառակութեամբ ապրելով իր ունեցածը փճացուց: Բոլոր ունեցածը հատցուցած էր, երբ երկրին մէջ սաստիկ սով մը եղաւ ու ինք չքատր դարձաւ: Ուստի գնաց այն երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ: Ան ալ իր ազարակը դրկեց զանիկա՝ խոզեր արածելու համար: Հոն կը փափաքէր խոզերուն կերած եղջիրէն իր փորը լեցնել, Բայց մէկը չէր տար անոր: Այն ատեն ինքզինքին գալով ըսաւ. Քանի՛ բանտորներ կան իմ հօրս տունը հացով լեցուած, ես հոս սովամահ կը կորսուիմ: Ելլեմ, երթամ իմ հօրս եւ ըսեմ անոր. «Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ ու քու առջելոյ, Ա՛լ արժանի չեմ քու որդիդ ըսուելու, զիս քու վարձկաններէդ մէկուն պէս ըրէ»: Ու ելաւ իր հօրը գնաց: Մինչդեռ ինք շատ հեռու էր, հայրը տեսաւ զանիկա ու գուրջ շարժեցաւ եւ վազելով՝ անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց զանիկա: Որդին ալ ըսաւ անոր. Հա՛յր, մեղանչեցի երկնքի դէմ ու քու առջելոյ եւ ա՛լ արժանի չեմ քու որդիդ ըսուելու: Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. Հանեցէք առաջին պատմուճանը ու հագցուցէք անոր եւ մատանի դրէք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը Եւ պարարտ գուարակը բերէք, մորթեցէք, ուտենք եւ ուրախ ըլլանք. Վասն զի այս իմ որդիս մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ: Սկսան ուրախութիւն ընել: Անոր մեծ որդին ազարակն էր, երբ եկաւ ու տանը մօտեցաւ, նուագարաններու եւ պարերու ձայն լրսեց: Ծառաներէն մէկը իրեն կանչելով՝ հարցուց, թէ Այս ի՞նչ է Անիկա ալ ըսաւ անոր. Եղբայրդ եկաւ ու հայրդ պարարտ գուարակը մորթեց, վասն զի ողջ առողջ ձեռք ձգեց զանիկա: Իսկ ինք բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել, ուստի իր հայրը դուրս ելլելով կ'աղաչէր անոր: Անիկա պատասխան տալով՝ ըսաւ հօրը. Ահա այսչափ տարի է, որ քեզի կը ծառայեմ ու բնաւ քու խօսքէդ դուրս չելայ ու ինձի երբէք ուլ մը չտուիր, որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի: Բայց երբ եկաւ այդ քու որդիդ, որ քու ստացուածքդ բոզերու հետ կերաւ, անոր մորթեցիդ պարարտ գուարակը: Եւ հայրը ըսաւ անոր. Որդեակ, դուն միշտ ինձի հետ ես ու իմ բոլոր ունեցածս քուկդ է: Սակայն պէտք է ուրախ ըլլալ եւ խնդալ, վասն զի այս քու եղբայրդ մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ»:

2 Corinthiens

6.1-7.1

Ainsi donc étant ouvriers avec lui, nous vous prions aussi que vous n'ayez point reçu la grâce de Dieu en vain.

Car il dit : je t'ai exaucé au temps favorable et t'ai secouru au jour du salut; voici maintenant le temps favorable, voici maintenant le jour du salut.

Ne donnant aucun scandale en quoi que ce soit, afin que [notre] ministère ne soit point blâmé. Mais nous rendant recommandables, en toutes choses, comme ministres de Dieu, en grande patience, en afflictions, en nécessités, en angoisses, En blessures, en prisons, en troubles, en travaux, En veilles, en jeûnes, en pureté; par la connaissance, par un esprit patient, par la douceur, par le Saint-Esprit, par une charité sincère, Par la parole de la vérité, par la puissance de Dieu, par les armes de justice que l'on porte à la main droite et à la main gauche. Parmi l'honneur et l'ignominie, parmi la calomnie et la bonne réputation. Comme séducteurs, et toutefois étant véritables; comme inconnus, et toutefois étant reconnus ; comme mourants, et voici nous vivons; comme châtiés, et toutefois non mis à mort; Comme attristés, et toutefois toujours joyeux; comme pauvres, et toutefois enrichissant plusieurs; comme n'ayant rien, et toutefois possédant toutes choses.

Ô Corinthiens! notre bouche est ouverte pour vous, notre cœur s'est élargi. Vous n'êtes point à l'étroit au-dedans de nous, mais vous êtes à l'étroit dans vos entrailles. Or pour nous traiter de la même manière (je vous parle comme à mes enfants) élargissez-vous aussi [à notre égard].

Ne portez pas un même joug avec les infidèles; car quelle participation y a-t-il de la justice avec l'iniquité? et quelle communication y a-t-il de la lumière avec les ténèbres? Et quel accord y a-t-il de Christ avec Bélial? ou quelle part a le fidèle avec l'infidèle?

Et quelle convenance y a-t-il du Temple de Dieu avec les idoles? car vous êtes le Temple du Dieu vivant, selon ce que Dieu a dit : j'habiterai au milieu d'eux, et j'y marcherai; et je serai leur Dieu, et ils seront mon peuple.

C'est pourquoi sortez du milieu d'eux, et vous en séparez, dit le Seigneur; et ne touchez à aucune chose souillée et je vous recevrai; Et je vous serai pour père, et vous me serez pour fils et pour filles, dit le Seigneur Tout-puissant.

Or donc [mes] bien-aimés, puisque nous avons de telles promesses, nettoignons-nous de toute souillure de la chair et de l'esprit perfectionnant la sanctification en la crainte de Dieu.

Luc 15.1-32

Or tous les péagers et les gens de mauvaise vie s'approchaient de lui pour l'entendre. Mais les Pharisiens et les Scribes murmuraient, disant : celui-ci reçoit les gens de mauvaise vie, et mange avec eux.


Mais il leur proposa cette parabole, disant : Qui est l'homme d'entre vous qui ayant cent brebis, s'il en perd une, ne laisse les quatre-vingt-dix-neuf au désert, et ne s'en aille après celle qui est perdue, jusqu'à ce qu'il l'ait trouvée; Et qui l'ayant trouvée ne la mette sur ses épaules bien joyeux; Et étant de retour en sa maison, n'appelle ses amis et ses voisins, et ne leur dise : réjouissez-vous avec moi ; car j'ai trouvé ma brebis qui était perdue? Je vous dis, qu'il y aura de même de la joie au ciel pour un seul pécheur qui vient à se repentir, plus que pour quatre-vingt-dix-neuf justes, qui n'ont pas besoin de repentance.

Ou qui est la femme qui ayant dix drachmes, si elle perd une drachme, n'allume la chandelle, et ne balaye la maison, et ne [la] cherche diligemment, jusqu'à ce qu'elle l'ait trouvée; Et qui après l'avoir trouvée, n'appelle ses amis et ses voisines, en leur disant : réjouissez-vous avec moi; car j'ai trouvé la drachme que j'avais perdue? Ainsi je vous dis qu'il y a de la joie devant les Anges de Dieu pour un seul pécheur qui vient à se repentir.

Il leur dit aussi : un homme avait deux fils; Et le plus jeune dit à son père : mon père, donne-moi la part du bien qui m'appartient; et il leur partagea ses biens. Et peu de jours après, quand le plus jeune fils eut tout ramassé, il s'en alla dehors en un pays éloigné; et là il dissipa son bien en vivant dans la débauche. Et après qu'il eut tout dépensé, une

grande famine survint en ce pays-là; et il commença d'être dans la disette. Alors il s'en alla, et se mit au service d'un des habitants du pays, qui l'envoya dans ses possessions pour paître les pourceaux. Et il désirait de se rassasier des gousses que les pourceaux mangeaient; mais personne ne lui en donnait. Or étant revenu à lui-même, il dit : combien y a-t-il de mercenaires dans la maison de mon père, qui ont du pain en abondance, et moi je meurs de faim? Je me lèverai, et je m'en irai vers mon père, et je lui dirai : mon père, j'ai péché contre le ciel et devant toi; Et je ne suis plus digne d'être appelé ton fils; traite-moi comme l'un de tes mercenaires. Il se leva donc, et vint vers son père; et comme il était encore loin, son père le vit, et fut touché de compassion, et courant à lui, se jeta à son cou, et le baisa. Mais le fils lui dit : mon père, j'ai péché contre le ciel et devant toi; et je ne suis plus digne d'être appelé ton fils. Et le père dit à ses serviteurs : apportez la plus belle robe, et l'en revêtez, mettez-lui un anneau au doigt, et des souliers aux pieds; Et amenez-moi le veau gras, et le tuez, et faisons bonne chère en le mangeant. Car mon fils que voici, était mort, mais il est ressuscité; il était perdu, mais il est retrouvé. Et ils commencèrent à faire bonne chère.

Or son fils aîné était aux champs, et comme il revenait et qu'il approchait de la maison, il entendit la mélodie et les danses. Et ayant appelé un des serviteurs, il lui demanda ce que c'était. Et [ce serviteur] lui dit : ton frère est venu, et ton père a tué le veau gras, parce qu'il l'a recouvré sain et sauf. Mais il se mit en colère, et ne voulut point entrer; et son père étant sorti le pria [d'entrer]. Mais il répondit, et dit à son père : voici, il y a tant d'années que je te sers, et jamais je n'ai transgressé ton commandement, et cependant tu ne m'as jamais donné un chevreau pour faire bonne chère avec mes amis. Mais quand celui-ci, ton fils, qui a mangé ton bien avec des femmes de mauvaise vie, est venu, tu lui as tué le veau gras. Et [le père] lui dit : [mon] enfant, tu es toujours avec moi, et tous mes biens sont à toi. Or il fallait faire bonne chère, et se réjouir, parce que celui-ci, ton frère, était mort, et il est ressuscité; il était perdu, et il est retrouvé.



Հոգևոր Հովիվի Պատգամը

Ելլեմ երթամ Հօրս մօտ»
(Ղուկասու 15:18)

Միրելի հաւատացեալներ,

Ահաւասիկ Մեծ Պահոց շրջանի երրորդ հանգրուանին հասած ենք: Երբ աւետարանը կարդացուի, կը խօսուի անառակ որդիի առակին մասին: Սակայն իմ կարծիքովս, պէտք է գայն կոչել՝ Ողորմած հօր առակը: Եկեղեցին մեզ կը հրաւիրէ այս առակին ընթերցումով, քառասնորդաց շրջանին, ապաշխարելու եւ երկնաւոր մեր Հօր ողորմութեան վրայ վստահելու:

Որդւոյն գործած յանցանքը կրկնակի է, որովհետեւ նախ՝ իր ժառանգութիւնը կը պահանջէ հօրը ողջութեան ատեն եւ երկրորդ՝ կը լքէ իր տունը եւ կ'երթայ աշխարհ, անառակ կեանք մը ապրելու համար, հեռու իր ընտանիքէն: Ամէն երիտասարդ, երբ որոշ տարիքի մը հասնի, կ'ուզէ ազատուիլ հօր եւ մօր իշխանութենէն, ազատ ու անկախ ապրիլ եւ իր բոլոր փափաքները իրականացնել անսանձ կեանք մը ապրելով. Սակայն չա'նդրադառնար թէ այսպէտով կը հեռանայ զինք սիրող եւ իր վրայ գուրգուրացող իր ծնողքէն ու հարազատներէն, կարծելով գտնել այդ սէրը ուրիշ շրջանակներու մէջ:

Փորձառութեան շրջան մը կայ կեանքին մէջ գոր կամայ թէ ակամայ, ամէն անձ կապրի, որուն ընթացքին, վստահած իր անձնական ուժերուն, կը փորձէ կանգուն մնալ եւ դէմ դնել ամէն տեսակի դժուարութիւններու: Իսկ եթէ այս առակը հոգևոր գետնի վրայ դնենք, պիտի տեսնենք թէ ինչպէս ամէն մարդ, տակաւ առ տակաւ կը հեռանայ Աստուծմէ եւ իր ստացած կրօնական ու բարոյական սկզբունքները անտեսելով, կապրի այնպիսի կեանք մը, ուր ամէն ինչ միայն նիւթականի կը կապուի:

Մեր իւրաքանչիւրին կեանքին մէջ, նիւթականը այնքան մեծ տեղ գրաւած է, որ յաճախ կը մոռնանք մեր հոգիով զբաղիլ, կամ գէթ մտածել թէ անմահ հոգի մը ունինք, որուն փրկութեան համար եւս ջանք պէտք է թափենք: Չկարծենք թէ երկնքի դռները լայն բացուած են մեր առջեւ եւ Տէրը ձեռքերը բաց՝ կը սպասէ մեր ժամանումին:

Այո, Տիրոջ ձեռքերը, սիրող հօր մը նման միշտ պատրաստ են մեզ ընդունելու, սակայն պայմանաւ որ մենք կատարենք առաջին քայլը դէպի մեր Արարիչն ու Հայրը: Նման անառակ որդիին, որ վերջապէս մտածեց, յետին չքաւորութեան մէջ, թէ ինք հայր մը ունի, ընտանիք մը ունի եւ հոն՝ կարող է գտնել ամէն հանգիստ եւ օգնութիւն. ինքն իրեն ըսաւ. «Ելլեմ երթամ հօրս մօտ եւ խնդրեմ որ զիս ընդունի հօրենական տան մէջ, գէթ որպէս մէկը իր ծառաներէն»:

Ապաշխարութեան առաջին քայլը կը կայանայ իր կացութենէն դուրս գալու մէջ, ցեխէն վեր բարձրանալու մէջ: Ելլեմ մեղքերու տիղմէն, դուրս գամ նիւթական եւ այլ մտահոգութիւններու մղձաւանջէն, որպէսզի կարենամ իմ հոգիիս մասին խորհիլ եւ զոջալով իմ անցեալի կեանքիս վրան, ջանամ մօտենալ իմ նախնական արդարութեանս եւ անմեղութեանս, Տիրոջ հոգածու խնամքին ներքեւ:

Հաւատաւոր հայորդիք, այս առակը մեզի ցոյց կու տայ թէ Տէրը ամէն օր անհամբեր կը սպասէ մեզի եւ պատրաստ է տալու մեզի մեր նախնական փառքն ու հանգստութիւնը, նոյնիսկ եթէ մենք մեզի արժանի չենք համարեր անոր: Մեր վրայ պիտի դնէ անմեղութեան պատմուճանը եւ մեզի պիտի ընծայէ իր ամենաթանկագին նուէրը: Մեր մատին պիտի անցընէ ոսկիէ մատանին, որպէսզի մեզի տայ այն իշխանութիւնը, որ ունէինք երբ որոշեցինք լքել զինք եւ հեռանալ իրմէ: Ի վերջոյ պարարտ եզին զոհը մեզի պիտի ընծայէ այն համոզումով, թէ՛ մեր տեղը երբեք չ'է կորսուած, այլ մեծ խնամքով պահպանուած է:

Երկնքի արքայութիւնը ահա մօտեցած է. Ապաշխարանքով ու աղօթքով միայն պիտի կարենանք մտնել այնտեղ, եւ գրաւել մեզի յատկացուած տեղը, արդ շտապեցէք եւ պատրաստուեցէք, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

*Օրհնութեամբ՝
Տէր Նաիթ քահանայ Մարգարեան*



ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե՛.-

- **Կրնա՞մ նայն օրը քանի մը անգամ հաղորդուիլ տարբեր եկեղեցիներու մէջ:**

Ո՛չ: Օրուան մէջ մէկ անգամ հաղորդուիլը ամբողջովին բաւարար է: Եթէ պատահականօրէն Ս. Պատարագի ժամանակ քանի մը սկիհներէն Ս. Հաղորդութիւն կը բաշխեն, ապա այդ պարագային ես պետք է միայն մէկ սկիհէն հաղորդուիմ:

- **Կարե՞ լի է հաղորդուիլ Մեծ Պահքի ընթացքին:**

Մեծ Պահքը զոջման, ապաշխարութեան եւ ներհայեցողութեան շրջանն է քրիստոնէայի կեանքին մէջ, երբ եկեղեցւոյ Ս. Խորանները ծածկուած են, այսինքն՝ խորհրդաբանօրէն մեր առջեւ փակ են դրախտի դռները, ուստի Ս. Հաղորդութիւն չի տրուիր: Թէ է ըբ ծիսական այս սովորութիւնը մեր Եկեղեցւոյ մէջ հաստատուած է, կը դժուարանանք ըսելու: Մինչդեռ միւս Եկեղեցիները հաւատացեալներուն կը յորդորեն յաճախակի հաղորդուիլ միայն Մեծ Պահքի ընթացքին՝ հոգեւոր առումով զօրացած սպասելով Տիրոջ հրաշափառ Յարութեան աւետիսին:

ԱՆԱՌԱԿԻ ԿԻՐԱԿԻ

Մեծ Պահոց երրորդ կիրակին կը կոչուի Անառակի կիրակի, որովհետեւ այսօր կարդացուող Աւետարանը կը պատմէ Անառակ Որդիին առակը (Ղուկ. 15:11-32): Մարդ մը երկու զաւակ ունէր: Կրտսեր որդին հօրմէն կը խնդրէ, որ իր ունեցուածքը բաժնէ իր երկու որդիներուն միջեւ եւ իր բաժինը կ'առնէ ու հօրենական տունէն կը հեռանայ: Հոն զեխ կեանք վարելով իր ամբողջ ունեցածը կը վատնէ ու կը սնանկանայ: Կրտսեր որդին շատ կը զոջայ ու իր այս տխուր վիճակին մէջ կը յիշէ հօրը տունը եւ կ'որոշէ վերադառնալ ըսելով.

«Հա՛յր, մեղանչեցի երկինքի դէմ ու քու առջեւ, եւ ա՛լ արժանի չեմ քու որդիդ կոչուելու. ըրէ՛ զիս վարձկաններէդ մէկուն պէս»:

Հայրը զակին զոջումը տեսնելով կ'ուրախանայ եւ գրկաբաց զայն կ'ընդունի: Աւագ որդին կը դժգոհի, որ ինք միշտ հօր

կողքին եղած է, բայց նման պատիւի չէ արժանացած: Հայրն ալ կ'ըսէ.

«Որդեակ՛կ, դուն միշտ ինծի հետ ես, ու ամբողջ ունեցածս քո՛ւկդ է: Մական պէտք էր զուարճանալ եւ ուրախանալ, որովհետեւ այս եղբայրդ մեռած էր՝ ու վերապրեցաւ, կորսուած էր՝ եւ գտնուեցաւ»:

Առակին մէջ հայրը կը խորհրդանշէ Աստուած եւ մեզի համար աւելի դիւրին կը դառնայ հասկնալու, թէ ինչու մենք Աստուծոյ կը կոչենք «Հայր»: Անառակ որդին եւ աւագ որդին կը ներկայացնեն մեղաւոր մարդոց եւ արդարներուն: Առակը ցոյց կու տայ, որ Հայր Աստուած ալ իր գիրկը կ'ընդունի անառակ որդիին նման ապաշխարող մեղաւորները: Իսկ անոնք, որ աւագ որդւոյն պէս կը կարծեն թէ արդար են, պէտք է խուսափին իրենց մասին չափազանց բարձր կարծիք ունենալէ եւ ուրախութեամբ ընդունին ամէն մէկ մեղաւորի ապաշխարութիւնն ու դէպի Աստուած ու եկեղեցի անոնց դարձը:

Holidays

Sunday, March 8, 2020

The Prodigal Son – The Meaning

The parable of the prodigal son is one of the most well-known stories of Jesus. It is more commonly referred to as the story of the prodigal son, though the word prodigal is not found in Scripture. To characterize the son as “lost” emphasizes

that sinners are alienated from God; to characterize the son as “prodigal” casts an emphasis on a wayward lifestyle. In truth, this particular parable has many points to bring out concerning the nature of man and God.

The word prodigal may be defined as “rashly or wastefully extravagant”; the son in the story exhibited this behavior with his handling of his share of his father’s estate. Having prematurely gotten hold of his inheritance from the father he “squandered his wealth in wild living” then, “began to be in need.” The natural state of unregenerate mankind is always toward lust and greed and extravagance of all kinds; without God we squander our resources and energies until we are void and empty. When the younger son found himself in this state, he remained in the far country working in a contemptible job and willing to eat the food he was feeding to the pigs which were under his care.



When we remain in a place of alienation from God, we descend into futility, darkness, and humiliation.

The parable of the prodigal son indicates, however, that we do have the opportunity to make a change; we do not have to stay in our hopeless state; we can come to ourselves. The lost son realized that in his father's house there was sustenance for him; he humbled himself, willing, if necessary, to be his father's servant, and started back home. This turning in our lives is the first indication of God's love for us. Even recognizing our sinful, hopeless state is initiated in us by God, Himself. "Or do you show contempt for the riches of his kindness, tolerance and patience, not realizing that God's kindness leads you toward repentance?" (Romans 2:4).

The parable of the prodigal son makes it obvious that God was at work. That he was able to see the younger son when he was still a long way off means that the father was watching for his son, waiting for him, longing for him. The father runs to him, embraces him, loves him and gives him gifts; he seems totally oblivious to the fact that his son has disrespected him, acted outrageously, and lost everything. The father lavishes upon him, celebrates over him. This is a wonderful picture of the great love of God towards us. He seeks after us, reaches out to us. When we come to Him, He washes away all our evil deeds of the past, not holding them against us. "You will again have compassion on us; you will tread our sins underfoot and hurl all our iniquities into the depths of the sea" (Micah 7:19).

The parable of the prodigal son also shows the attitude of the self-righteous sinner, pictured by the older son. He quarreled with his father that the younger son had messed up and yet the father had prepared for him the "fatted calf." Because he considered himself better than the younger son, he could not share in the father's joy. "My son," the father said, "you are always with me, and everything I have is yours." The older son's hardness of heart made him unaware of the riches available to him in his father's house. This son complained that he had "slaved all these years." He had no more love for the father than the younger son; nor did he avail himself of all the good things the father freely provided for him at all times. Both sin and self-righteousness separate us from God. We all require God's grace, His unearned, unmerited love for us. The father went out to the disgruntled older son. God is He who always continues to seek after us, regardless of the state we are in.

Armenian Lenten Services

The Peace Service, Rest Service and Sunrise Service are performed more often during Great Lent than at other times of the year.

(Usually, Peace and Rest Services are performed only on Friday evenings.)



These three services are part of the Church's cycle of seven daily worship services but are of particular significance during Great Lent because they are penitential in nature and remind us of the effort, we are making to restore our pure and joyous relationship with God.

The evening Peace Service consists of prayers for peace to end each day. These prayers remind us that God is with us even in the face of trial and temptation.

The Rest Service, which comes just before retiring for the night, asks God's continuing care through the night. It includes the prayer of St. Nersess.

The Sunrise Service, performed first thing in the morning, reminds us that God is the giver of the light of morning and the light of salvation.

Its beautiful prayers and hymns reflect the fresh and serene quality of the most beautiful time of day.

This service is performed in our churches before or after Sunday morning liturgy.

Հայկական Պահքի Խոհանոց/Lenten Kitchen Ghourabia for Lent

8 Cups all purpose flour

2 Cups Vegetable margarine room temperature

1 Tsp Vanilla extract

½ Cup of any kind of brandy or water

1 Tsp Baking Soda

1 Cup sugar

½ Lb unsalted toasted almond chopped into large or small pieces.



After baking

Sprinkle Rose water (optional)

Sprinkle powder sugar

Preparation:

In a small bowl mix well baking Soda and brandy or water until baking soda is dissolved. In another large bowl cream margarine and sugar until it's fluffy. Beat in vanilla and baking Soda mixture then add flour in increments and knead until its smooth then add the almonds.

At this point take a piece of dough size of walnut and make the shape you like (ball shape, use cookie cutter or wooden mold) whichever you prefer.

Bake at preheated oven 350F for approx 20 - 30 minutes but check at 15 minutes to make sure they do not get browned or burned and they are evenly baking and it's cooked through.

Remove from oven sprinkle with rose water then sift powder sugar. Let them cool a little bet and sprinkle some more powder sugar.

This recipe makes approx. 30 cookies depends on the size of cookies you make you might get more.



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՈԹՔԸ

ԱՂՈԹՔ

ԽՆԴՐԱՆՔՆԵՐՈՒ ԿԱՏԱՐՄԱՆ

Ով բարերար եւ բազումողորմ
Աստուած, քու առջեւ իյնալով
կ'աղաչենք մեր բոլոր սրտով,
եւ գթութիւն կը խնդրենք քեզմէ,
ինչպէս որ խոստացար քու ծառաներուդ
եւ ըսիր թէ՛ «Ամէն ինչ որ խնդրենք Հօրմէ
հաւատքով՝ Որդւոյ անունով, պիտի տրուի ձեզ»:

Ով Տէր, նոյն խոստումդ շնորհէ հիմա քեզ
հաւատացողներուս, եւ մեր խնդրուածքն ի
բարին կատարէ, քանզի քեզ ապաւինած ենք:
Եւ քու առատ ողորմութիւնովդ մխիթարէ զմեզ
մեր այս կեանքին մէջ, եւ մեզ առաջնորդելով
հասցուր երկնքի անճառ արքայութեանդ,
փառաբանելու եւ պատուելու համար
Ամենասուրբ Երրորդութեանդ. այժմ եւ միշտ
եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն:

SUPPLICATION

POUR L'EXAUCEMENT DES PRIÈRES

Nous approchant de Toi, Dieu bienfaiteur
et très miséricordieux, nous te supplions
de tout cœur et implorons ta bonté,

sivant ce que tu as promis à tes serviteurs selon ta parole :

“Tout ce que, dans la foi, vous demanderez au Père par le Nom du
Fils, vous sera accordé”.

Maintenant aussi exauce-nous qui croyons en toi
et accueille nos prières pour le bien, car nous avons confiance en
toi. Par ton abondante miséricorde, reconforte-nous-en cette vie et
fais-nous parvenir, sous ta conduite, à ton Royaume céleste
indicible, pour que nous te glorifions et te bénissions, très sainte
Trinité, maintenant et toujours et pour l'éternité de l'éternité.

Amen.

Շաբթուայ խորհրդածութիւններ

- Տաղանդը կը բաղկանայ մէկ երրորդ բնագոյն, մէկ երրորդ յիշողութենէն ու մէկ երրորդ կամքէն:
Գարլ Կուսլաւ Եունկի
Յոգեբան - Փիլիսոփայ
- Ողջոյնի ու քաջալերանքի խօսքերը կրնան հակիրճ ըլլալ, բայց անոնց արձագանքը անսահման է:
Մայր Թերեզա
- Չղջումը, աղօթքը, ապաշխարութիւնը անբաժան պէտք է ըլլան պահեցողութենէն, քանի որ ասոնք են հիմնական պայմանները, ուր կը գործէ Աստուծոյ բուժիչ ու քակիչ զօրութիւնը:
Շնորք պատրիարք Գալուստեան
- Աստուած մեզի փորձութիւններ կ'ուղարկէ, որպէսզի յաղթահարելով անոնք՝ ամրապնդուինք, ոչ թէ յուսահատինք:
Մայր Թերեզա

Եկեղեցական Տօնացոյց Յառաջիկայ Շաբթուան

Մարտ – Mars

9, Երկուշաբթի – ԺԵ. Օր Մեծի Պահոց
Lundi 9 – 15ème jour du Jeûne du Carême

10, Երեքշաբթի – ԺԶ. Օր Մեծի Պահոց
Mardi 10 - 16ème jour du Jeûne du Carême

11, Չորեքշաբթի – ԺԷ. Օր Մեծի Պահոց
Mercredi 11 - 17ème jour du Jeûne du Carême

12, Հինգշաբթի – ԺԸ. Օր Մեծի Պահոց
Jeudi 12 – 18ème jour du Jeûne du Carême

13, Ուրբաթ - ԺԹ. Օր Մեծի Պահոց
Vendredi 13 - 19ème jour du Jeûne du Carême

14, Շաբաթ – Ի. Օր Մեծի Պահոց
Տօն Սրբոցն Յովհաննու Երուսաղիմա Հայրապետին եւ Հայրապետին
մերոյ Յովհաննու Օձնեցոյն, եւ վարդապետացն մերոյ՝ Յովհաննու
Որոտնեցոյն եւ Գրիգորի Տաթևացոյն:

Samedi 14 – 20ème jour du Jeûne du Carême
Fête St. Jean, Patriarche de Jérusalem, de notre Patriarche St. Jean
d'Odzoun,
de nos vartabeds St. Jean Vorodnètsi et St. Grégoire de Datèv.

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՅՈՒՆ ԵՎԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Mr. & Mrs.
Antranik & Armine Sirinyan \$500.

HOKEHANKISD:

THE LATE LEVON MOURADIAN:

Mr. & Mrs.
Arto & Ani Mouradian \$200.

THE LATE NUBAR & SUZAN TASCIYAN:

Mr. & Mrs.
Aret Tasciyan \$200.

THE LATE ANTRANIK TCHADERJIAN:

Mr. & Mrs.
Jeff & Ani Tchaderjian \$150.

THE LATE VAHAN TOUKHIAN:

Mr. Vrej Toukhian \$20.



ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՂԱՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կիրակի, 15 Մարտ 2020
Ս. Պատարագի աւարտին
կ. ե. Ժամը 2-ին

ANNUAL GENERAL MEMBERSHIP ASSEMBLY

Sunday, March 15, 2020 at 2:00 pm

After the Holy Mass

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**



**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ԿԻՐԱԿԻ, 8 ՄԱՐՏ 2020**

**REQUIEM
DIMANCHE, LE 8 MARS 2020**



**Պրն. Վրէժ Նիկողոսեանի,
Եկեղեցոյ Տիկնանց Յանձնախումբին
էւ օժանդակ տիկիններուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի**

**Եկեղեցոյ բարերարուհի
էւ Տիկնանց Յանձնախումբի անդամուհի՝**

**ԻՄԱՍՍՈՒՅԻ ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ
(IMASDUHI NIGOGOSSIAN)**

**Մահուան 3-րդ տարելիցին առիթով:
Հիւրասիրութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ
հանգուցեալի յիշատակին:**



**Պրն. Վրէժ Դուխեանի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իր սիրեցեալ հօր՝**

**ՎԱՀԱՆ ԴՈՒԽԵԱՆԻ
(VAHAN TOUKHIAN)**

Մահուան 9-րդ տարելիցին առիթով:



**Տիկ. Արշալոյս Կերկերի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի**

իր սիրեցեալ ամուսնոյն՝
ՊԱՐՄՈՒՄ ԿԷՐԿԷՐԻ
(BARSUM GERGER)

Մահուան 26-րդ տարելիցին առիթով:



ՏԵՐԸ ՅԻՇԷ ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐԸ
ԵՒ
ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԱՑՆԷ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ ԱՐՕԹՔ

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,
գթա քո արարչական սիրովդ
ի հոգիս հանգուցեալ ծառայից քոց:
Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ:
Արա արժանի ողորմութեան քաւութեան
եւ թողութեան մեղաց:
Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս քո
յաջակողմեան դասուն:
Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.
դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:
Եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.
Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:

Ժամերու փոփոխութիւն
սկսեալ Կիրակի, 8 Մարտ
2020-ի առաւօտեան ժամը 2-
ին ժամացոյցներու
սկսեալ կ'ուղղուին 1
ժամով դէպի առջեւ:
DST starts on Sunday, March 8,
2020, at 2:00 A.M. At this time,
clocks are turned forward 1





ՀՄԿՈՒՄԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին

Փետրուար 26 – Ապրիլ 9, 2020

Փետրուար 26 – Քարոզիչ՝

Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան

*Պահոց Ընթրիք – Փառանձեմ Գեորգեան, Լիլիթ Մարտիրոսեան,
Շողիկ Գրիգորեան եւ Թամար Սաղըրեան:*

Մարտ 4 – Քարոզիչ՝

Արժ. Տ. Գեորգ Քհնյ. Աբեան

Պահոց Ընթրիք – Թերեան Սշակութային Միութիւն

Մարտ 11 – Քարոզիչ՝

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Պահոց Ընթրիք – Տիկ. Թային Թանաշեան

Մարտ 18 – Քարոզիչ՝

Գերշ. Տ. Դանիէլ Եպս. Ֆընտրգեան

Պահոց Ընթրիք –

*Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան
եւ Տիգրանեան Ընտանիք*

Մարտ 25 – Քարոզիչ՝

Գերշ. Հ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան

Պահոց Ընթրիք –

Տիկ. Սօնիա Գալայճեան եւ Սօսի Նազգաշեան

Ապրիլ 1– Քարոզիչ՝

Պատուելի Յովհաննէս Սվաճեան

Պահոց Ընթրիք –

Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք

Ապրիլ 9– Աւագ Հինգշաբթի

Քարոզիչ՝ Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան

*Պահոց Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ
«Մարի Սանուկեան» սրահին մէջ*

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

✉ stgregorychurch@gmail.com 📍 Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

🌐 www.saintgregory.ca



ՀՄԿՈՒՄԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ
Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՒՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ՏԱԿԱՐ

Հանդիսապետութեամբ՝

Գերշ. Ս. Արգար Եպս. Յովակիմեանի

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Բարձր ներկայութեամբ՝

վաստակաշատ հոգեւորականներու

Գերշ. Ս. Յովնան Արք. Տերտերեանի

Առաջնորդ Մ.Ն. Ամերիկահայոց Արեւմտեան Թեմի
ԵՆ

Գերշ. Ս. Դանիէլ Եպս. Ֆընտըգեանի

Առաջնորդ Մ.Ն. Ամերիկահայոց Արեւելեան Թեմի

Օրուան բարոզիչ՝

Գերշ. Ս. Դանիէլ Եպս. Ֆընտըգեան

Հսկումի Արարողութիւն

Չորեքշաբթի, 18 Մարտ 2020

Երեկոյեան ժամը 7-ին

Յաւարտ Հսկումի

արարողութեան տեղի պիտի ունենայ

Պահոց Ընթրիք

Պատրաստութեամբ՝

Տ. ԵՆ Տիկ. Ասպետ ԵՆ Միրնա Պաճաբեաններու
ԵՆ

Տ. ԵՆ Տիկ. Գրիգոր ԵՆ Ռօզա Տիգրանեաններու

Եկեղեցւոյ «Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Սիրալիք հրաւեր բոլորին:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

 stgregorychurch@gmail.com  Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

 www.saintgregory.ca

WESTERN ARMENIAN COURSE FOR BEGINNERS



St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

OFFERED ON SATURDAY AT 1:30 – 3:00PM

Starting from:

March 14, 2020 to June 13, 2020

duration: 3 months



COURSE INSTRUCTOR :

MR. AVEDIS BAKKALIAN

**Textbook by Dr. Dora Sakayan: Modern Western
Armenian for the English-speaking world.**

**THE COURSE IS DESIGNED FOR ADULT
LEARNERS WHO HAVE LITTLE OR NO
KNOWLEDGE OF THE ARMENIAN LANGUAGE**

Courses will start on March 14, 2020

Time: Saturdays at 1:30 – 3:00pm

**Place: St. Gregory the Illuminator Armenian Cathedral
of Montreal**

615, Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2

**FEES: \$250 PER SESSION (THREE MONTHS
INCLUDING THE TEXTBOOK)**

**FOR MORE INFORMATION OR TO REGISTER
CONTACT:**

TEL: (514) 279-3066

E-MAIL: STGREGORYCHURCH@GMAIL.COM

**SPECIAL PAYMENT TERMS MAY BE
ARRANGED NON-REFUNDABLE**



**ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN
ԿԻՐԱԿԱՄՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ**



Միրով կը յայտնենք, թէ
Շաբաթ, 28 Մարտ 2020-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի
կատարուի Սոնթրեալի Մբ. Գրիգոր
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ
մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան:

*Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան*



ՄՈՆՏՐԵԱԻ Ա. ԳԻԿՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ ԱՊՈՍՏՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐ
ST. GREGORY THE LLUMINATOR ARMENIAN CAHEDRAL OF

ԾԱՂԿԱԶԱՐԴ

ՍԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐՅՆՈՒԹԵԱՆ ՕՐ ԺԱՄԸ
12:30-ԻՆ

PALM SUNDAY

CHILDREN'S BLESSING DAY AT 12:30 NOON
Ս. ՊԱՏԱՐԱԳ – DIVINE LITURGY

Կիրակի, 5 Ապրիլ 2020 – Sunday, April 5, 2020

Առաւօտեան ժամերգութիւն – Morning Mass -9:30
Ս. Պատարագ – Divine Liturgy – 10:30

Պատարագիչ՝ - Celebrant
ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԶՅՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
REV. FR. DAVID MARGARYAN

Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԱՄԻՐՏԻՆ – FOLLOWING THE SERVICE

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՏՕՆԱԿԱՆ ԾԱՇԿԵՐՈՑԹ
«ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ» ՍՐԱԴԻՆ ՄԷՃ:

- ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐ
- ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԱՆԿԱ-ՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱՆՈՒՄԻ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐ

FESTIVE LUNCH IN "MARIE MANOOGIAN" HALL
ORGANIZED BY PARISH COUNCIL

- ENTERTAINMENT
- YOUTH CHOIR PERFORMANCE

ՏԵՂԵՐՈՒ ԱՊԱՅՈՒՎՄԱՆ ԳԱՄԱՐ
ԳԱՃԵՑԷ ԳԵՆԱՋԱՑՆԵԼ ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԳՐԱՍԵՆՆԱԿ – FOR RESERVATION PLEASE
CALL AT (514)279-3066

ՍՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ - ENTRANCE FEE \$20

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514)279-8008 stgregorychurch@gmail.com
Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal





**LES FÊTES RELIGIEUSES IMPORTANTES DE L'ANNÉE 2020
SELON LE CALENDRIER DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE**

05/01/2020	DJRAKALOUYTS / ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍՈՒՐԲ ԵՆՆԻՆԱՆ Vigile de la Nativité et de la Théophanie, Veille de Noël
06/01/2020	SOURP DZNOUNT / ՍՈՒՐԲ ԵՆՈՒՆԴ ԵՒ ԱՍՏՈՒԾՑԱՅՑՍՈՒԹԻՆ Noël et Epiphanie
13-14/02/2020	DIARNENTARATCH / ՏԵՄՈՆԸՆԴԱՌԱԶ Fête de la Chandeleur, Présentation de Notre Seigneur au Temple, à 40 jours.
20/02/2020	VARTANANTS / ՎԱՐՊԱՆԱՆՑ Fête de saint Vartan et de ses 1036 compagnons d'arme
23/02/2020	POUN PAREGUEANTAN / ԲՈՒՆ ԲԱՌԵԿԵՆԴԱՆ Carnaval - Début du Carême
28/02/2020	MOUDN VIRAB / ՄՈՒՆՏԻ Ի ՎԻՐԱՊ Fête de St. Grégoire l'Illuminateur, commémoration de son emprisonnement.
05/04/2020	DZAGHGAZART / ԾԱԴԿԱԶԱՐԴ Dimanche des Rameaux : entrée du Christ à Jérusalem
07/04/2020	AVEDOUM / ԱՎԵՏՈՒՄ Annonciation à la Sainte Vierge Marie
09/04/2020	AVAK HINKCHAPTI / ԱՎԱԳ ԶԻՆԳԵԱՐԹԻ Jeudi Saint. La Cène, Lavement des pieds, Service des Ténèbres
10/04/2020	AVAK OURPAT / ԱՎԱԳ ՈՒՐՔԱԹ Vendredi Saint. Commémoration de la Passion et d'Ensevelissement
11/04/2020	DJRAKALOUYTS / ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ Samedi Saint. Vigile pascale.
12/04/2020	SOURP HAROUTYUN (ZADIG) / ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՆ (ԶԱՏԻԿ) Pâques. Résurrection de Notre Seigneur Jésus-Christ.
13/04/2020	MERELOTS / ՄԵՌԵԼՈՑ Lundi de Pâques (Requiem pour tous les défunts).
21/05/2020	HAMPARTSOUM / ԶԱՐԲԱՐՁՈՒՄ Ascension du Christ
31/05/2020	HOKEKALOUSD / ԳՈԳԵԳԱԼՈՒՏ Pentecôte
14/06/2020	ETCHMIADZINE / ՍՈՒՐԲ ԷՉՄԻԱԾԻՆ Fête de la Cathédrale Saint Etchmiadzine
19/07/2020	VARTAVAR / ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՆ (ՎԱՐՊԱՎԱՌ) Transfiguration de Notre-Seigneur Jésus-Christ
16/08/2020	VERAPOKHOUM — KHAGHOGHORHNEK / ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ Assomption de la Sainte Vierge. Bénédiction du raisin
13/09/2020	KHATCHVERATS / ԽԱՉՎԵՐԱՑ Exaltation de la Sainte Croix.
10/10/2020	TARKMANTCHATS / ԹԱՐԳԱՆԱՆՉԱՑ Fête de la découverte de l'écriture arménienne et de la traduction de la Bible.
28/11/2020	SOURP THADEOS — BARTOUGHIMEOS / ԹԱԴԵՍ-ԲԱՐՊՈՒԴԻՆԵՍ Fête de nos premiers Illuminateurs Apôtres Thaddée et Barthélémy





Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը վերամէկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ _____
2. Մանկապատանեկան երգչախումբ _____
3. Շախմատ (ճատրակ) _____
4. Նկարչութիւն _____
5. Հայոց լեզու _____
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք): _____
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել _____ Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային): _____

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:

- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը \$15, երկուքի պարագային՝ \$25, իսկ երեքի պարագային՝ \$33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել

Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն

անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:


Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



SUMMER YOUTH CAMP D'ÉTÉ DES JEUNES



LEARN MORE AND APPLY AT
WWW.CAMPARARAT.CA

FOR INFORMATION WRITE TO
INFO@CAMPARARAT.CA

FIND US ON FACEBOOK AT
[FB.COM/ARARATSUMMERCAMP](https://fb.com/ARARATSUMMERCAMP)



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻԶ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINATEUR
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard street, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Address : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2